№ 15 — ՔԱՍԱՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինն է 10 ռուբլի,
վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.,
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպեկ,

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետ,

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ,
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով,
Յայտարարութիւններ ընդունվում են միմիայն ս. Շահվերդեանի գրավիլիօնում,

Ծանօթութիւն առաքելոց. Ամսագրի համարները ուղարկվում են միայն կանոնաւոր կերպով վճարողներին. Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ,

Օտարազգի թերթերը պիտի ուղղակի խմբագրութեան հասցէով. — Все ред. газеты «Мегу Аѣасманъ», въ Тифлисѣ, или Redaction de «Meghou Haïastani», à Tiflis. (Caucase).

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿԻՒՐԱԿԻ, 24 ՓԵՏՐՎԱՐԻ 1885

ՆԵՐԿԱՅ 1885 ԹՈՒԱԿԱՆԻՆ

„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Ար հրատարակվի առյն պիրքով եւ ծրագրով.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

I) Պետական կարգադրութիւնք.— II) Առաջնորդողներ առօրեայ ամենաուեսակ խնդիրների մասին.—III) Ներքին տեսութիւն.— Տեղական եւ հասարակական իմպիրների վերաբերութեամբ յօդուածներ եւ թղթակցութիւնք.— IV) Քաղաքական վիճակի վերայ յօդուածներ եւ լուրեր.— V) Մանր լուրեր.— VI) Խառն լուրեր.— VII) Բանասիրական.— Ֆելիետօններ, Պատկերներ, Վիպեր, Մատենախօսութիւնք, Գիտութեանց եւ արհեստից վերաբերեալ յօդուածներ.— VIII) Պատասխանք.— IX) Յայտարարութիւններ գանազան լեզուներով.

Տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի կիսամեայ 5 ռուբլի.

Փոստի եւ փոստ հասցնելու ծախքը իմբագրութեան վերայ է:

Սորագրվիլ կարելի է Թիֆլիսում. I) Խմբագրատանը.— II) պ. Բ. Շահվերդովի գործակալութեան.— III) Զ. Դրիդորեանի գրախանութում.— IV) պ. Յ. Շահինեանցի խանութում:

Ներկայ 1885 թուականից խմբագրութիւնս ընդունում է աւելն տեսակ յայտարարութիւնք ՄԻԱՅՆ պատրոն Շահվերդեանցի լրագրական գործակալութեան միջնորդութեամբ. ուստի և «ՄԵՂՈՒԻՆ» յայտարարութիւն տալ ցանկացողք թո՛ղ բարեհաճեն դիմելու ուղղակի վերոյիշեալ գործակալութեան:

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Խորհուրդը յայտնում է, որ Հանգուցեալ ՅՈՎՍԷՓ ՄՈՒՐԱԴԵԱՆՑԻ հոգհանգիստը անտիկալ պատճառով յետաձգվում է, և կը կատարվի առաջիկայ կիւրակէ, մարտի 3-ին:

(95) 1—1

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՈՒՅՍ ԵՒ ԿԵՆԴԱՆԻ

Հնուց ի վեր ալդին մարդիկ դիտելով բուսականութիւնը կազմել են այն համոզմունքը, որ բոյսերը աճում են, կերակրվում են և բազմանում, բայց զուրկ են չարժողութիւնից: Շարժողութեան պակասութեան մէջ իսկ, կամենան տեսնել բոյսի և կենդանու մէջ եղած էական զանազանութիւնը: Սակայն աւելի խորը ուսումնասիրելով բուսականութիւնը, առանձին առանձին բոյսերը, աւելի մօտիկ ծանօթանալով բոյսի կեանքին, մենք զարմացմամբ դալիս ենք այն եզրակացութեանը, որ չարժողութիւն էլ ոչ միայն պակաս է բուսական թագաւորութեան մէջ, այլ թէ նա չատ և չատ տարածուած է և առաջն է լինում նրա կեանքի բազմազան երևոյթների մէջ:

Մեծ դժուարութեամբ դուրս կը գտնենք փոքրիկ կաթ բոյսի սերմ. մանից՝ լինի նա տերև, ցօղուն, արմատ, մազմզուկ, միայն թէ լինի նա կարած չատ բարակ, թափանցիկ և չը լինի ձևաւորած, և դնենք այդ կաթը խոչորացոյցի տակ,—մեր աչքերին կը ներկայանայ մի այնպիսի հետաքրքիր երևոյթ, որպիսին կարող է միայն տալ զործարանաւոր աչքարանը: Մենք կը նկատենք որ այդ բարակ ու թափանցիկ կաթը, որ պարզ աչքերով ոչինչ չէր ներկայացնում, խոչորացոյցի տակ բաղկացած է անթիւ մանր կլօբաձև գնաւոր մարմիններից—խորչերից, որոնք ունին պատեր և օրոց մէջ յայտնի կերպիւ նկատվում է նոցա բովանդակութիւնը — հեղանիւթ, խորչի հեղանիւթը, որ կոչվում է պրօտոպլասմա և որ թանձր չերմի պէս փռուած է պատերի ներքին մակերևոյթի վերայ կամ թէ ծորերի պէս ձգվում է խորչի խոռոչի մէջով, որ լցցուած է աւելի նոսր հեղանիւթով, — պրօտոպլասման սկզբում զանգազ, յետոյ աւելի արագ սկսվում է չարժուիլ խորչի մէջ: Պրօտոպլասման չարժվում է առաջ խորչի մի պատի երկայնութեամբ, իջնում է միւս պատով, չուռ է գալիս պատին ա. ռիչով և վերջը գնում է իր առաջվայ տեղը, որպէս զի նորից կրկնէ իւր չըրջանառութիւնը: Պրօտոպլասմայի այս արագ չրջանառութիւնը միևնոյն խորչի մէջ կարելի է դիտել ամբողջ ժամերով, մինչև անգամ և օրերով: Այն խորչերի մէջ, որտեղ պրօտոպլասման կազմում է ծորերի ամբողջ ցանց, չարժողութիւնը միայն չրջանառութեամբ չէ լինում պա. տերի ուղղութեամբ, այլ նա բարակ ծորերով կտրում է խորչի խոռոչը. այս տեսակ չարժողութիւնը կարելի է նկատել եղինճի մազերի, նոյնպէս պատուհանի մէջտեղի խորչերի մէջ, դոր օրինակ այն մեծ, ազատ, պարզ աչքով տեսանելի խորչերի մէջ, որոցից բաղկացած է ճմերուկի ամենահասուն փափուկ մասը: Հարկաւոր է միայն ասեղով վերցնել այդ խորչերից մի քանիսը և, դնել նոցա խոչորացոյցի տակ, որ նոցանից ամեն մէկի մէջ նկատուի այս հետաքրքիր երևոյթը: Այսպէս ուրեմն վերագրելով խորչերի պրօտոպլասման միշտ չարժվում է այն էլ ինքնուրոյն տանից որ և ֆիզիքական ոյժի ազդեցութեան, թէև տաքութիւնը, ելեքտրականութիւնը կարող են արագացնել կամ դանդազացնել կամ մինչև անգամ բոլորովին կանգնացնել այդ չարժողութիւնը:

Մի մի անգամ պրօտոպլասմայի այդ չարժողութիւնը այն չափով է լինում որ կարելի է նկատել և պարզ աչքով: Մի խումբ էակներ կան, որոնց ինքնուրոյն ձևը երկար ժամանակ չփոխուիլը պիտանականներին և սոքա չէին իմանում համարել նոցա բոյս թէ կենդանի: Սոքա կոչվում են լօրձա տունկեր, որովհետև ամբողջ կեանքում կազմուած են պրատոպլասմայից առանց սրան է ձևի և խորչային թաղանթի և այդպէս էլ նման են անդոյն, մուգդեղնագոյն լօրձանիւթի. Այդ էակները կազմվում են փող փայտի, նեխուղ տերևի մակերևոյթի վերայ. մի այդ տեսակ էակը կարելի է տեսնել կաշուի գործարաններում կըղեղի դէզերի մէջ: Այդ թերևնօսր զանգուածը, որ կոչվում է պլասմոդի, մչտական չարժողութեան մէջն է: Նա իրանից արձակում է ստեր, ուր հարևան մասերից պրօտոպլասման հոսում է. այդ նոր կազմուող ոստը յետէ ձգվում ընդհանուր զանգուածի մէջ, երևում է նորից մի այդպիսի ոստը, ուր նոյնպէս պրօտոպլասման հոսում է. և այսպէս թէ քաշուելով թէ առաջ հոսելով պլասմոդին սողում է ամենայն կողմ և միշտ դլխաւորապէս մի որևիցէ ուղղութեամբ, մինչև անգամ փոխում է իր առաջվայ տեղը, դէղերից դուրս է դալիս լոյսի մէջ և այսպէս չարունակվում է մինչև նրա բազմանալը: Այս միջոցին նա փոխ վամէ անորոշ ձևի նչմարքի, որ տևնում է չատ կարճ կեզև, որի տակ դանվում է մանրադէտ փոշի, նման այն փոշուն, որ բարձրանում է ասրի տակից, երբ անձրևներից յետոյ դաշտի վերայ երևացած մի տեսակ սպիտակ սունկ—անձրևի սունկը կոխում ես: Թէ պնդանց աղբիւրների մէկը լինէր: երբեմն էջմիածնում որդն կարմրի մշակութիւն կար, որ իբրև գազանիք պահում էին ս. էջմիածնի միաբանք, որոնց ներկարար վարդապետները կամ եպիսկոպոսները մշակում էին այդ միջատներն և նրանցից հայրապետական կոնդակներ դրելու համար կարմիր թանաք էին շինում: Այս ցոյց է տալիս, որ որդան կարմրի մշակութեան համար էլ յարմարութիւն ունի Արարատեան դաշտը: Ներկայումս ոչ ոք չը գիտէ այդ մշակութիւնը. ծագկարար Սահակ եպիսկոպոսի մահուամբ, ասում են, անյայտացել է այդ պարապմունքն և՛ միաբանութեան համար: Բայց միթէ դժուար է վերականգնել որդան կարմրի մշակութիւնը գիտութեան օգնութեամբ: Տարակոյս չը կայ, որ որդն կարմիր մինչև ցայժմ էլ կայ ս. էջմիածնայ շրջակայքում, միայն նրան չէն ճանաչում:

Անցեալ տարի դեր. Գ. վարդապետ Տ. Ս. ուղարկել էր մեզ խորվերապից բաւական քանակութեամբ կանաչադոյն մանր միջատներ, հետազոտել տալու համար, թէ արդեօք դրա որդն կարմիր է՞ն: Հետազոտութիւնը ցոյց տուեց, որ նոքա հասարակ բզեզներ էին:

Սրանից առաջ լրագիրներում պարթևցաւ հարց կովկասում թէյի թուփ և Զիթենի մշակելու մասին: Առաջինը չնաշան բոյս է, և յայտնի բան է պէտք է նրան փորձել մշակելու և այդպէս տեսնել մեր երկրի ընդունակութիւնն այդ բոյսը արտադրելու վերաբերութեամբ. իսկ Զիթենու մասին փորձ կարևոր չէ, քանի որ նա մեր երկրին դրեթէ դրացի երկիրների բոյս է, որոնց հողն ու կլիման բոլորովին նման են մեր կովկասի մի քանի նահանգների հողին և կլիմային. ուստի և կասկած չը կայ, որ այդ բոյսի մշակութիւնը յաջողութիւն կ'ունենայ մեր երկրի գէթ մի քանի գաւառներում: Բայց տարին որքան ձիթապտուղ և ձիթենու ձէթ մտնում է մեր երկիր արտասահմանից, քանի որ Սուխումում և Արտուինի գաւառում փոքրը քանակութեամբ մշակվող ձիթապտուղներն ամեն կողմանէ շատ ընտիր են, թէ՛ իրանց խոշորութեամբ և թէ՛ իրանց համով նշանաւոր: Թէթ Ֆրանսիայի պրովանս նահանգը, ուր յաճախ Սեվենեան լեռներից փչող միստրալ քամին մեծամեծ վնասներ է պատճառում ձիթենիներին, մշակում է այս բոյսն և արտասանց նշանաւոր աղբիւր է արևլեան բաքանչիւրը իւր սրացած ծայրին ունի երկու թարթիչ: Փոքր ժամանակից յետոյ հատիկները միևնոյն եռանից կախուն դէս ու դէն ընկնիլ, պոչոյ գալ, վազ տալ ամեն կողմ, չարժելով իւրանց թերթիչները: Այս չարժողութիւնը անկարելի է զանազանել մանրադիտական կենդանիների— ինֆուզորիաների—չարժողութիւնից, այնպէս որ սկզբում չատ գիտնականները չէին հաւատում իրանց աչքերին, չէին հաւատում որ դոքա բուսական ծագումն ունեցող մարմիններ են և կարծում էին որ դոքա կենդանիներ են որ գոյացել են բոյսի մէջ: Այս չարժուն խորչերը փոքր ժամանակից յետոյ աճում են և առաջ են բերում նոր բոյս, կը նշանակէ որ դոքա սպօրներ են: Եւ որպէս զի դոքա իրանց նմանութեամբ յիշեցնեն կենդանիներին, ուստի նոցա անուանում են կենդանասպօր (զօօսպօր):

Այսպէս բուսական աշխարհը որ տեսանելի է խոչարացոյցի տակ զրկուած չէ չարժողութիւնից՝ չարժվում է պրօտոպլասման ձմերուկի անթիւ խորչերի մէջ. չարժվում են բիւրաւոր կենդանասպօրներ, որոնք բազմաքանակ թուով երևան են գալիս թէ բորբոսնած իրի վերայ անդոյն կամ դորշ դոյնով կամ կանաչ դոյնով՝ ջրի երեսին: Սակայն կարելի չէ արդեօք նկատել նոյն չարժողութեան երևոյթը այն բոյսերի մէջ որոնց մենք կարող ենք դիտել պարզ աչքով և որոնց սկզբանէ մենք կընկել ենք «բոյս» անուանով: Դժուար չէ նկատել այդպիսիների մէջ ևս չարժողութիւնը, թէև դոցա մէջ հաղուագիւտ է այդ երևոյթը, քան առաջնի տեսակների մէջ. Այդ երևոյթը նչմարվում է աւելի տաք երկիրների բոյսերի մէջ և այս չատ հաս

ՂՎՎՎՎՍՈՁՈ ՂՎՖՎՁՂ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԱԿՈՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ՎԱՅԱՍՎՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.

I

84 [illegible] «Պրակտ» 80 Ա-ում տպած

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության 3-ին մայիսի 1918 թվականի հոկտեմբերի 18 օրվա «Ձեռնարկությունների վերաբերյալ հարկային հարաբերությունների մասին» օրենքի

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության 3-ին մայիսի 1918 թվականի հոկտեմբերի 18 օրվա «Ձեռնարկությունների վերաբերյալ հարկային հարաբերությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը լրացնել հետևյալ նոր խմբագրությամբ.

« [illegible] 421 [illegible] հոկտեմբերի 27-ի [illegible] ի [illegible] ի [illegible]

հազանձ ամրոխին, տեսնում ես հազարաւոր հազուստների զանազան ապրանքներ, հազար ու մի տեսակ խօսակցութեան ոճեր։ Գնենք այստեղ մի տեղ հաւաքված մարդկանց վիճաբանութիւնը։

1. «Դուն ինչ իս տասմ հէյ, Աստուած գիանայ պիպ մկի էս նիմութիս մօչայ կօնիմ»։ Թիֆլիզցի։

2. «Լա՛, ատ, էն ինչ կասայ, իզայ ալեավէր իարիփ. ած էն իմալ կ'զրուցէ, հէչ բան չէք խասկանայ»։ Մշեցի։

3. «Ջանմ ինչ էք յիրար եարայ կըպիր, ինչի յիրար եալ կածէք կը. գնացէք պօլիցէն, վարօսամ, ալ ինչ ճըվճվաք կը.—Կարսեցի։

4. «Ախպէր բանմ ըսեմ, դուք նաֆիլայ տեղը ըսեղ թող էք էղել ու բոլբըռաք կը.—Շիրակեցի։

5. «Ցօ՛, խէ՞ա ըմէ զարպատ, չըլի չաղացել ա. խէ՞ ա չի տալի, օր ըսկի հրսկանում չենք իմէ ինչ ասում.—Լօռեցի։

6. «Ո՞վ ա դրան մեր դլխին ըտարըմնա նաղնաչիտ արել, որ ամէն բան ինքնագլուխ բերում է անում։—Ջալալ—Օղլեցի։ Վերջապէս ինչքան մարդ այնքան լեզու։

Շատ մեծ յանդգնութ գործած չեմ լինել եթէ ասեմ Կարսի վաճառականական խանութները աւելի շատ են, քան տները։ Հէնց որ մէկը մի քանի մանէթ դրբատեց, խոկոյն խանութ բաց կանի։ Առ հասարակ ամէն տեղ ձգտում ունի հայը վաճառական դառնալու։ Ժողովրդի աչքում վաճառականութիւնը աւելի պատուաւոր տեղ է բռնում, քան արհեստները։ Ամենահասուստ կօչկակար եւ բիւտաարդը աւելի դժուարութեամբ է ամուսին գտնում, քան աղքատ վաճառականը. որովհետև ամենքն էլ ուզում են իրանց աղջիկը վաճառականին տալ, քան կօչկակարին։ «Կօչկակարը միշտ կօչկակար կը մնայ, իսկ վաճառականը՝ աղայ կը դառնայ»։ Արհեստաների մասին խօսել անգամ չարժէ. ամէն բան գնում նահապետական գրութեան մէջ է։ Կամինում էին մի «առևտրական ընկերութիւն կազմել։ Ընկերութեան նպատակը պիտի լինի ուշ դարձնել երկրի արդիւնաբերութեան, արհեստագիտութեան և առևտրականութեան վրայ։ Որքան էլ այդ ընկերութեան անդամները սրտով կպած են գործին, որքան էլ դեղեցիկ ծրագիր և մեծ մեծ նպատակներ ունեն, այնուամենայնիւ իմ համոզմունքս է որ ընկերութիւնը իւր արդանդի մէջ մահանալու է։ Կարսի գպրոցների ներկայ դրութիւնը չատ անյոյսանձելի է. այս մասին պէտք է ընդհակառակութիւն անել ուսուցիչներին որ թէ 5—6 ամսով ռոճիկ չեն ստանում, բայց անարատնջ չարունակում են իրանց պաշտօնը, պահպանելով գպրոցի գոյութիւնը։ Բժիշկները յատահասվելով Կարսեցիների զատապարտելի անառողջութիւնից, հեռացան գպրոցից։

Կարսի մի քանի քահանաների մասին չատ բան կարող էի ասել, բայց ավատում եմ լռագրական սիմնականներին։

Կարսի առաջնորդի մասին կը ցանկայի պիտացած գրել, բայց սրբազանը իւր սեպհական գրչով գրչով «Նոր-Դարի» յետին համարում արդէն հանդէս է դուրս եկել։

Ս. Սիմեոնի ուշադրութիւնը հրդեհական խնդրոյ առթիւ հրաւիրում եմ Կարսի վիճակի այն թշուառ գիւղերի վրայ, որոնք քահանայ չունենալու պատճառով բոլորովին զրկված են հոգեւոր մխիթարութիւններից, և կամաց կամաց կորցնում են իրանց եկեղեցական ծեսերն ու սովորութիւնները։ Այս մասին ես հաստատ գիտեմ, որ սիմեոնի պաշտօնական դրութիւններով տեղեկութիւն արտած է, բայց թէ ինչու Ս. Սիմեոնը չի տալիս բաւականութիւն. այդ միայն համար հանելուկ է, ոչ սակաւ ուշադրութեան արժանի է Գյարա-Գալայ գիւղը, որ արդէն ամրողջապէս ընդունել են բողոքականութիւն և աւելով ատում են այն եկեղեցին, որի մէջ մկրտուել են։ Մինչ Սիմեոնի պարտականութիւնը չէ մի քարողիչ վարդապետ ուղարկել այսպիսի դիպուրում խրատելու և նրանց վերադարձնելու իրանց եկեղեցու ծոցը, որից մոլորացրել յանդգնել են մարդասպանները։

Նոյեմբերի 25-ին գալով Կարսից, նոյն օրը երեկոյեան ժամը 10-ին մանուկ Կազդվան. որ ոչ քազաք է և ոչ գիւղ։ Գիւղը ամրողջապէս ծածկուած է այգիներով, այնպէս որ գիպի մէջ չորս-կող չաս քիչ տան կինք անտեսում։ Ոչ միայն կանոնաւոր, այլ անկանոն փողոց էլ չը կայ, բոլորը դարչելի կեղտոտութեամբ ապականուած օձապտոյտ չաղիղ ներ են։ Սարսափելի կեղտոտ էր գլխաւոր վաճառանոցը։ Բնակիչները զանազան տեղերից գաղթած լինելով դարձեալ խայտաճամուկ են ամէն բանի մէջ։ Թէ եկեղեցին և թէ ուսումնարանը իւր ներկայ դրութեամբ կատարեալ նախանձք է տեղացիների համար։ Քահանաները անուրեականելի ապէտներ։ Ժողովուրդը ապրում է այդեպանութեամբ, երկրագործութեամբ և վաճառականութեամբ։ Օտարականների վրա օդը չատ չուտ է ներգործում. երկու օր մնացողը երրորդ օրը դողացնում է, բայց տեղացիների համար չատ լաւ է։ Կազդվան հիանալի դիրք ունի և գրաւիչ տեսք։ Դուրս գալով Կազդվանից դեկտեմբերի 1-ին մանուկ վաղարշապատ։ Շարունակութիւնը յետոյ։

Ձանապարհորդ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՑԱՐԳՈՑ ԽՄԲԱԳԻՐ

Խնդրեմ հետևեալ նամակիս, որ գրուած է «Աղբիւր» ամսագրի մէջ ձայնագրուած—հրատարակուած երգերի մասին, տեղն տաք ձեր լրագրի մէջ։

Ուրախալի երևոյթ է, որ մեր ամսագրերի մէջ էլ հրատարակվում են մեր երգերը ձայնագրութեամբ և ընդհանրացնվում ժողովրդեան մէջ։ Սակայն յարմար պիտի համարեմ, որ ինչպես մեր դրականական ասպարիզում զանազան թերուս և հակառակ անձինք մուտք են գործում իրանց յոռի գրուածքներով և այն միմիայն անուան համար, թէ իրանք էլ գործում են, այնպես է լինում և ձայնագրական աղբատիկ դրականութեան մէջ։ Ամեն ոք, որ փոքր ինչ տեղեկութիւն ունի ձայնագրութեան արհեստի մասին, մի քանի երգեր արտատպելով, կամ թէ ոչ, մի քանիսի եղանակը սխալ թէ ուղիղ ձայնագրելով, կամենում է երաժիշտ երևալ և ասել թէ «իմ լսման էլ ձգում եմ մեր ազգասիրական դրականութեան մէջ»։

Մանաւանդ, խօսքս «Աղբիւր» ամսագրի մէջ ձայնագրութեամբ հրատարակուած երգերի մասին է, որ 1883 թուից սկսած, գրեթէ իւրաքանչիւր համարում զետեղուած է մի երգ եւրոպական ձայնագրութեամբ։ Այդ երգերի ձայնագրողները թէև իրանց անուն-ները ծածուկ են պահել, սակայն գրուածներից երևում է, որ նոքա շատ բարեկիրթն այդ արհեստի մէջ, որովհետև այնպիսի սխալներ են արած, որ մի քանի ամիս պարապած աշակերտներին էլ ներելի չէ։ Ահա ձեզ օրինակներ։

1883 թուի № 1. զետեղուած է «Թիֆլիսանկի» երգը։ Այս երգի եղանակն գերմանական է և ձայնագրութիւնը ճիշդ. միայն բառերը իրանց տեղերը չը լինելով գրուած՝ ազատ-դուել է եղանակը։ № 2. զետեղուած է «Ձախարակ» վերնագրով երգը։ Այս երգի արմատում—բանալիի մօտ գրուած են չորս կիսավար (բեմոլ), բայց գրքա իրանց տեղերը չեն գրուած, որով և պժուարացնում են եղանակի երգելու գործը. բացի սո-րանից երգերի վանկերը իրանց ձայնանիշների տակ չը լինելով, էէ իմացվում թէ ո՛ր վանկը, ո՛ր ձայնանիշի տակ պէտք է երգուի։ № 3. արտագրուած է «Մաերիմ ընկեր» երգը։ Այս երգի եղանակը բացի այն, որ չէ ձայնագրուած այնպէս, ինչպես երգվում է, ձայնագրութիւնն էլ սխալ է, արմատի—բանալիի մօտ հարկաւոր կիսաձայնները գրուած չեն, առանց որոյ, ո՛չ իմացվում է ի՛նչ եղանակ է և ո՛չ էլ երգվում այստեղ նոյնպէս բառերը գրուած չեն իրանց տեղերը։ № 4. կայ «Զատիկ» երգը. սորա մասին ոչինչ չ'ուզում ասելու, որովհետև դա արդէն յայտնի «Ով մեծասքանչ» երգի եղանակն է. միայն պէտք է նըկատել, որ բառերի պակասութեան պատճառաւ եղանակը մնացել է կիսատ։ № 5 և 6. «Զկիթուանցի պատանու մահը» երգն է. սորա եղանակը և ձայնագրութիւնը ճիշդ չեն, նոյնպէս և վանկերը խառն են գրուած։ Այս եղանակը շատ ախորժալուր է, բայց ափսո՛ս, որ չէ յաջողուել ձայնագրողին։ № 12 և 11. զետեղուած է «Վանեցւոց խրախոյս» և «Ձայն առաւ ով ծովակ» երգերը։ Սորա ճիշդ են ձայնագրուած. միայն վերջնի վերջաւորութիւնը այնպէս չէ ձայնագրած, ինչպէս երգվում է։ 1884 թուի միմիայն № 10-ի մէջ զետեղուած են երկու երգեր, գէթ մեր ձեռքը գրքա են հասել։ Դորանցից առաջինը «Ջանգուլում Ջան ծաղկի Ջան» ժողովրդականացած երգն է, որի եղանակն էլ ամենքին յայտնի։ Դորան ձայնագրել է Գյարար քահանայ Յովսէփեանը և ձեռագիրն ղրկելով «Երաժշտութիւն Գյարար քահանայի Յովսէփեանց»։ Մեզ զարմացնում է ութ-հինգ վարմունքը, նա մի ժողովրդականացած երգ վերցնելով և նրա եղանակը ձայնագրելով մեծ պարծանք է համարում իրեն սեպհականացնելով։

Մի երգի եղանակ ձայնագրելով չէ կարելի երաժշտութիւն ասել, նոքա միայն գրում են երաժշտութիւն բառը իրանց շարագրութեանց վերայ, որոնք իրանց ստեղծականութեամբ մի նոր ինքնուրոյն և որոշ ուղղութեամբ եղանակ են յառաջ բերում։ Այս կարելի է տեսնել միմիայն մեզանում, միևչդեռ Եւրոպայի աշխարհահռչակ երաժիշտները շատ անգամ համեստութենից ծածկում են իրանց անունները։ № 10. գրել, կարդալ «երը որ լեզուս բացուեցաւ» անհասկանալի վերնագիրն է տպագրուած։ Որքան և անհասկանալի լինի, եղանակից իմացվում է, թէ ի՞նչէ, միմիայն գրուած է կիսատ պատառ, խառն և սխալ ձայնագրութեամբ, սորա արմատական կիսաձայները էլ չը կան գրուած, որով եղանակը փոխուած է։ Այս տեսակ համրակ աշխատակիցներըը պահանակ օգնելու որ և է լրագրութեան, ընդհակառակն վնասում են և աւելի են տալիս շատերին զբաղութիւններ յայտնելու։ Այս տեսակ զբաղութեանց հետևանքն էր, որ ես իմ համեստ կարծիքս յայտնեցի. և սորանով թող չը կարծեն, որ «Աղբիւր» ամսագրին վնասելու նպատակ եմ արել, այլ միմիայն ցանկացել եմ որ նորա յարգոյ խմբագիրը, ի նկատի առնելով այս նկատողութիւնները, աշխատի թոյլ չը տալ թերուսներին գրականական ասպարիզում գործելու։

Վատ չէր լինի, եթէ երբեմն հրատարակվէին «Աղբիւրի» մէջ և երգեր հայկական ձայնագրութեամբ, սորանով նա մեծ ծառայութիւն արած կը լինի մեր ձայնագրութեան ուսուցիչներին։

Ձայնագիր.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քարաուլի առումն մեծ ազդեցութիւն ունեցաւ անգլիական զօրքի վիճակի և նորա բռնած գիրքի վերայ։ Մինչև Քարաուլի առումն և Գորդոնի սպանումն, նորա նպատակն էր օգնութիւն հասնել վերջնին. ուստի և չը նայելով ամեն գժուարութեանց նա մնաւ Նուբիա և կարուում հաստատվելով, մի զօրաբաժին առաջ ուղարկեց, որ յաղթութիւններ անելով անապատով հասաւ մինչև Մետամմէհ։ Մի զօրաբաժին մինչև իսկ Քարաուլին մօտեցաւ, բայց արդէն ուշ էր։ Անգլիացոց զօրաբաժինը մնացիր էր Մետամմէհը առնելից յետո, երթալ դէպի հիւսիս Բերբերի վերայ, ուր Կորտիից պիտի գար մի այլ զօրաբաժին էլ Աբու Համէտի վերայով Նեղոսի ափով։ Այս երկու զօրաբաժինները պիտի տիրէին Բէրբերին, որ ապահով ճանապարհով միանալով Սուակիմի նաւահանգստի հետ կարող Ծովի ափով պիտի անգլիացոց համար գառնար ամուր յենարան, որտեղից նոքա ապահով կերպով կարող կըլինէին շարունակել իրանց յաջող գործողութիւնքը Սուդանում։ Այս ծրագիրն ուղիղ հասած էր, բայց գժբաղդաբար նորա իրագործման խոչընդոտ եղաւ ոչ թէ Թշնամական ոյժն, այլ գաւառականութիւնն, որ մատնեց Քարաուլը Մահդիի ձեռքն և պատճառ դարձաւ զինեալ Գորդոնի, այդ քաջ և ազնիւ անգլիական զինուորի, սւ. ընդհանուր մարդկութեան բարեկամի սպանման։ Այսպէս կրկին երևեցաւ որ Թշնամու ուժից աւելի վատնգաւոր է ներքին Թշնամին — դաւաճանը։ Այսպէս գաւաճանութիւնը վոխեց երկրի վիճակը։

Քարաուլն, որ թուում էր Մահդիի գէմ գարձաւ նորա գլխաւոր ամրութիւնն իւր բերդով և պատերազմական պաշարներով։ Անգլիացիք հասնելով Քարաում պիտի գանէին այն իրանց ապահովութեան տեղ և միանալով Գորդոնի զօրաց հետ, կոարէին Մահդիի ոյժն ու վերականգնէին կարգ և խաղաղութիւն Սուդանում։ Բայց Քարաումի առումը բոլորովին վոխեց հանգամանքները, ոյժ տուեց Մահդիին և քանդեց անգլիացիների ծրագիրը, որոնք յարձակվող դիրքի վոխարէն ստիպված են առ այժմ պաշտպանողական դիրք բռնել, մինչև որ յարձակման համար կարևոր ոյժը հասնի պատերազմի ասպարէզը։ Այս պատճառով գիներալ Ուօլսլէյը կարգադրել է յետ քաշել իւր զօրքերը Կորաի և եթէ հարկը ստիպէ սրանից եղ աւելի հիւսիս, մինչև ապշուքն, երբ թէ՛ կարևոր օգնական զօրքերը կը հասնին և թէ՛ յոյս կայ, որ երկաթուղին Բերբերի ու Սուակինի մէջ պատրաստ կը լինի։ Ուստի և Սուդանի պատերազմի վճռական և որոշ կերպարանք առնելը պէտք է սեպե ունենայ աշնան։ Իսկ մինչև այդ ժամանակ անգլիական զօրքերը պաշտպանողական դիրք պիտի պահպանեն. մինչդեռ Մահդին Քարաուլից 50,000 զօրքով թէև շատ յամբը քայլերով շարժվում է դէպի հիւսիս։

«Inq. Relge» լրագրին Լոնդոնից հեռագրում են. «Ամատեղ հաստատվում է լուրը, թէ Սոփեարա Բուլլերի զօրաբաժինը յետ է քաշվում Աբու-Կլէա։ Նահանջից առաջ լորդ Ջարլզ Բրութերը պէտք է ոչընչացնէր Գորդոնի ուղարկած զրահաւոր նաւերն, երկիւղ կըրելով, որ նորա չ'ընկնեն թշնամու ձեռքը։ Ասում են, որ Մահդիի բանակը, որ Քարաումից գնում է դէպի Մետամմէհ, կ'երթայ մինչև Բէրբեր, որպէս զի Բրակէնբերիի (Բերբերի էրլի) զօրաբաժինի առաջը կտրէ։ Ուստի և այս զօրաբաժինն, որ 2,500 հոգուց է բաղկացած հրաման է ստացել կանգ առնել և սպասել օգնութեան։ Այս միայն լուր է։ Քարաումի առման և Գորդոնի սպանման վկայ եղող անձը վերջնին ծառան էր։ Նա Կարսի բերից մեծ քանակութեամբ թղթեր, որոնց թվումն է և օրական յիշատակարանն, որ բովանդակում է իւր մէջ ամեն իրողութիւնք, որ տեղի են ունեցել Քարաումի պաշարման ժամանակ, այնպէս Գորդոնի նամակներն իւր ընտանեաց, որոնք նա գրել է յատնվարին և որոնց մէջ Քարաումի քաջ պաշտպանը հաղորդում է, որ իւր դէմ կազմվում է դաւաճանութիւն, որպ դէմ պատերազմելու հնար չունի, որ անգլիացիք իրան օգնութեան կը հասնեն չատ ուշ, ուստի և նա յատնանում հրաժարական է տալիս աղգականներին և բարեկամներին»։

—

Ֆրանսիական կառավարութիւնը վերջապէս որոշել է հրատարակաւ յայտնել պատերազմ մասին Զինաստանի դէմ, որպէս զի կարողանայ վայելել պատերազմող կողմի իրաւունքն և չեզոք տէ-

րութեանց նաւերը զննէ։ Ահա պաչտօնական ծանուցագիրն, որ ֆրանսիական դեսպանը Բերլինում ուղղել է պետական քարտուղար դոկտոր Բուչին, 6-ին փետրվարի 1885 թ. «Ող. Տէր. «Զէզոք պետութեանց առևտրական հաղորդակցութեանց թեթևութեան համար ֆրանսիական կառավարութիւնը մինչև ցայժմ աչխատում էր սահմանափակել իւր ծայրն զօրութեան գործողութիւնը և չը վայելել նաւերը կալանաւորելու և ըննելու իրաւունքը։ Լօնդօնի կառավարութեան իւր գաղթական իչխանութեանց ուղարկած կարգադրութիւնը ընտիպեցին ֆրանսիական կառավարութեան փոխել գործողութեան այս եղանակը։ Խիստ կարգադրութիւնք, ֆրանսիական նաւերի անգլիական նաւահանգիստներում մնալու մասին, ստիպեցին հանրապետական կառավարութեան օգուտ քաղելու այն իրաւունքից, որ տալիս են միջազգային օրէնքները պատերազմող կողմին և այս մտքով հրաման ուղարկելու ֆրանսիական նաւատորմի հրամանատարին, որ գործում է չինական ծովերում։ Ինձ յանձնած է հաւատիացնելու ձեզ, որ չեզոք պետութեանց առևտրական հաղորդակցութեանց վերաբերութեամբ կը վարվեն ամենայն զգուչութեամբ—կը հալածվի միայն նեննգութիւնը պատերազմական պաշարների տեղափոխութեան մէջ։ Ալֆօնս-դէ-Կուրսէլ»։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Ախալցխայի թեմական պատգամաւորի ընտրութեան համար ներկայացուցիչ ընտրվել են մեծ. պպ. Կ. Մուշեղեանց և Հ. Վարդանեանց։

***

ՇԻՐԱԿԻՑ հաղորդում են։ — Անցեալ չաբթին Գիրակոցիք ընտրեցին իրանց երկու պատգամաւորները, որ պէտք է առաջիկայ մարտի 9-ին ներկայ լինեն կարս քաղաքում թեմական պատգամաւորի ընտրութեանը։ Շիրակեցիք պարտաւորացրին իրանց պատգամաւորներին թէ ում պէտք է թեմական պատգամաւոր ընտրեն և ում կաթողիկոս։

***

Նոյն տեղից գրում են. — Մեզանում կատաղել գարուն է թագաւորում. այս ամեն սարսափելի ցրտեր գեռ ևս տեսած չենք, և երկու օր է, որ անձրև է գալիս, և ոչ մի տեսակ տարափոխիկ հիւանդութիւն չը կայ թէ մարդկանց մէջ և թէ անասնոց մէջ, միայն թէ ևրևլայոց մէջ կայ կապուտ հաղ կոչուած ցաւն, և հասակաւորների մէջ խորիոլա ասուած հիւանդութիւնը, թէև ոչ վտանգաւոր, բայց տևում է մի չաբաթ, դիչեր ցերեկ գլուխը ցաւում է, աչքերից և քթից առատ ջուր գնում։

***

«Կասպի» լրագիրը հաղորդում է հետեւեալ արտաքոյ կարգի դէպքը։ «Եվսաւէտօպոլցի Հուսէյն Հասան օղլին, փեչի սակց գաչոյն հանելով յարձակվում է երկու հայերի վերայ փողոցում, մէկին սպանում է և միւսին վիրաւորում։ Վերջինը վախչելով ազատվում է, փախչում է և եղեռնագործը արիւնոտ դաչոյնը ձեռքին, մօտացողին մահ սպառնալով. բայց և այնպէս դանվում է մի համարձակ պօլիցիական Ալեսկեր անուանով, որ բռնում է եղեռնագործին, միայն ձեռքին մի վէրք ստանալով։ Երբ չարագործին տանում են պօլիցիա, այստեղ էլ նա աչխատում է պօլիցիականների մէկ դաչոյնը խլել նոր չարագործութեան համար. բայց չէ յաջողում։ Մարդասպան Հուսէյնը քննութեան տակ է երեք գործերի համար և կալանաւորած էր. միայն քննիչի պահանջմամբ ազատվել էր և յանձնված էր պօլիցիայի հրամկողութեան»։

***

Մոզդոկից հեռագրում են.— «Հաւաստի աղբիւրներից յայտնի է, որ Ա֊ժ֊արխանի բոլոր թեմը ցանկանում է թեմական պատգամաւոր ընտրել պ. Ատուաձատուր կաճկաճեանցին, կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար։

***

Ամսոյս 17-ին երկու հայ գիչերը 10 ժամին ս. կարապետի մօտ հանդիպում են չորս հոգու։ Վերջինները մօտենալով նրանց ցանում են նոցա աչքերին քթախոտ և ապա յափշտակում են։

***

Երևանից «Нов. Обозр.» լրագրին գրում են, որ այնտեղ տեղական բժչկի թոչլատութեամբ ռուսաց եկեղեցու մէջ թաղում են ասագ քահանայ Գ-ի կնոջ։ Այժմ եկեղեցում այնպիսի նեհսկայ դիակի հոտ է կանգնած, որ անկարելի է հինգ րոպէ մնալ այնտեղ։

***

Ախալցխայից գրում են, որ այդ քաղաքի տիֆի մասին լրագիրներում հաղորդած տեղեկութիւնքը չատ չափազանց են, թէ հիւանդների թիւը ընդ ամենը 45 հոգի է, իսկ մեռնողները— 2։ Թէ Մեծի պահոց օրերին Ախալցխայում այդ տեսակ հիւանդութիւնքը սովորական են։

***

ՇԻՐԱԿԻՑ հաղորդում են։— Առատութիւն և արժանութիւն է ամեն բանի, միայն փողի թանգութիւն է։ Յորենի տոմարը 8 ռ., գարու տոմարը 3 ռ. առնող չը կայ։—

***

Հալաթարից մեզ գրում են. — Ըստ անօրէնութեան քաղաքային բժչկի օգնական Գրիգոր Աբելեան Մատենադարանի Հալաթարի հրատարակում չրջող չներին թոյն են տալիս։ Բայց հաղիւթէ սատկածների դիակները երկու օրից վերցնում են։ Սրանց չրջապատում են անգործ մարդիկ և մանր երեխաք. Այս պատճառ առթում չիբկիրնեին էլ իրենց արհեստը գործ են դնում, մարդկանց գրպանները դատարկելով։ Երկու անձանց դրամների կորուստը բաւական վատսակ է տուել այս գողերին մէկից 53 և միւսից 36 ռուբլի և անցաթուղթը չափչտակել են։ Այս մասին քաղաքային պ. Գր. բժչկի և պօլիցիականների ուչադրութիւնը հրաւիրում ենք։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մօտերումս վախճանված Բոստանցի յայտնի հարուստ Փորձ Գորգինէին, որ միլիոնների տէր է, Թողից արտասովոր կտակ։ Այս կտակի զօրութեամբ հանգուցեալ այրի կինը պէտք է ստանայ ամեն տարի գուա ոսկի իւր քաչով։ Ներկայումս նրա կչիռն է 97 ֆունտ ուսաի և կ'ստանայ 97 ֆունտ ոսկի։ Հասկանալի է, որ անմխիթար այրին պէտք է աչխատէ պահպանել իւր գիրութիւնն, որովհետև իւր կչիռն նուազելուն հետ, պիտի նուազի և նրա տարեկան արդիւնքը ձորձ Գորգինէր մահուան տարեդարձի օրը պիտի կատարվի Կոզնհանդիստ, որից յետ տիկին Գորգինէրը կչռվում է և այս կչիռը որոչում է նրա արդիւնքը առաջիկայ տարվան համար։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ։
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՁԵԱՆՑ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վրաստանի և Իմէրէթի Հայոց վիճակային կոնսիստորիայի ատենի մէջ նչանակուած է ամուրդ սոյն փետրվար ամսոյ 25-ին, առանց կրկնամուրդի, կապալատուլոյ համար Ա֊ժառատատական երկյարկեայ տունն, որ գտանի ի 4 մասին Եփեսեայ ի Մուխրանեան փողոցի։

(91) 1—2

ՇՕԿՕԼԱԴ
Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.
(Ц. 2442.)

Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը հաստատում է հասարակութեան դիտութեան, որ վերայի և Մնացականեանցի կամուրջների վերայով անցուդարձի համար յօդուտ քաղաքի նչանակած է հարկ այն տաքսայով, որ հաստատած է նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեվիչը 19-ին հոկտեմբերի 1881 թ.

1) Թոչոր կենդանիք.

Զի, ուղտ, եզը, գոմէշ, ջորի և՛ թամբած կամ բեռնաւորված 2 կոպ.
Առանց թամբի կամ բեռնի—1 կոպ.

2) Մանր կենդանիք.

Ոչխարք, այծեր, հորթեր և խոզեր՝ իւրաքանչիւր հինգ գլխից — 2 կոպ.
Գառներ, ուլեր և խոճկորներ — հինգ գլխից — 1 կոպ.

Ծ ա ն օ թ.—Մանր կենդանեաց անցուդարձի ժամանակ հնդի գլխի համար միայն հարկ է պահանջվում 1—4 գլուխը ընդունում են առանց վճարման, իսկ 5—9-ի համար պահանջվում է հարկ միայն հնդի համար և այլն.

3) Ֆայէտօն — — 5 կ.
4) Գրօժկի — — 3 կ.

Ծանօթ.—Իւրաքանչիւր ձիու համար ֆայէտօնում երկուսից աւելիից և գրօչկում մէկից աւելից—2 կոպ.

5) Ֆուրգոնները, սայլերը, պովոզկաները և գրօշները իւրաքանչիւր լծած կենդանու համար վճարում են։

Բեռնաւորված ժաման.—3 կոպ.
Առանց բեռնի — — 2 կոպ.

Ծանօթ.—Վճարումից ազատ են՝ ջրկիրները կամ տակառները ջրով, մսի սայլերն և բեռները, մեռելակիր կառքերը, գրօշներն և սայլերն, որոնք հանդուցեալ են տանում, հրաչէջների խումբը, կուրիէրները, էստաֆետները, որոնք պետական գործի են գնում, փոստը, պետական բեռնակիրները և քաղաքի նախիրը կազմող կենդանիք։

ՆԱԽՎՈՒՄ Է ԿԱԼՈՒԱԾՔ

515 քառակուսի սաժէն գետնով 14-րդ ուչամասում, կալսերի փոդոցում, տուն Աւետիս Մեսրոպովի, Հայի մաղազինի մօտ, Առաքելովան հանդիպար։

ՅԱՅՏՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Սիցիանի Գապիտան Պետրոս Մաղաքեանց) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ընտիր Թըղթի վերայ մաքուր տպուած I, II և III մասերը միասին լոյս տեսաւ և արդէն վաճառվում է Բազվում իմ սեպհական ապարանում և Թիֆլիզի գրավաճառանոցներում. գինն է 1 ռ. 20 կ.։

Յանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.— Въ Баку въ Типографіи Александра Гасабова.

22—30

ԱՄԵՐԻԿԱՆԿԱ

Տնտեսութեան մէջ օգտաւէտ գործիք սենեակի սովորական ջրով լուացք անելու համար, շատ քիչ սապոն ծախսելով և լուացքը լաւ պահպանելով, մինչև անգամ փոքրահասակները կարող են լուացք անել այդ գործիքով։ Հրաւիրվում են գործատէրները։ Գործիքի գինն է ձանապարհածախսով 5 ռուբլի է. Սիբիրում 8 ռուբլի։ Իւրաքանչիւր գործիքի հետ ուղարկվում է Հրահանգը։ Հասցէն. «Губернскому агенту Русскаго Страховаго Общества», В. Шлемензону въ Симферополѣ.

ԵՐԲՈՐԴ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Մեծ. պ. Բեհբուդ Իլչի.— Զնդից իմ հնոյս ելևնա Ալեքսէևիա Բազուսատատատացած «Ամերիկանկա» երևկայաւ չատ յարմար տեսակութեան մէջ լուացքի համար. ուստի և ցանկալով ձեռք բերել էլի երկու «Ամերիկանկա», խնդրում եմ ուղարկել ինձ հետևեալ հասցէով. Կանեվ (Կիևվի նահանգ) Կիևվի նահանգական դատաստանական քննիչ Սէրգէյ Պետրովիչ Բազուսատատուկուն։ Տասը ռ. դրամը ուղարկում եմ նամակիս հետ։

21 հոկտ. 1884 ամի։

Գերմանական լեզուն

ուսուցանում է չուտ և արժան գնով

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ
Մ. ՄԻԽԱՅԵԼՍԵՆԸ.
Եկատերինոսլաւի փողոց. № 121.

САМЫЙ ПОЛНЫЙ ЕЖЕНЕДЕЛЬНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ

РАДУГА ДАЕТЪ СВОИМЪ ЧИТАТЕЛЯМЪ **99** БЕЗПЛАТНЫХЪ ПРИЛОЖЕНІЙ ВЪ ГОДЪ И ОДНУ ПРЕМІЮ.

Иллюстрированный семейный журналъ. III годъ изданія.— Въ годъ 50 №№ ДАПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА: при подпискѣ 2 руб; затѣмъ 3 мѣсяца подрядъ по 1 р. Адресъ редакціи: Москва, Столешниковъ пер., д. Корзинкина.

ПОДПИСНАЯ ЦѢНА: въ годъ съ доставкою и пересылкою **5** РУБ.

(Ц. 10214)

ՆՈՐ ԳԻՐՔ
ՋԵՌՆԱՐԿ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ Ս. ՄԱՆՈՒԵԼԵԱՆԻ։

Վաճառվում է Թիֆլիսում՝ Բ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան մէջ, կենդրոնական գրավաճառանոցում, եղբարց Զովհաննէսների բանկային գրասենեակում և պարտ Պատուբեանի լամպային մագազինում։ Օտարաքաղաքացիք փոստի ծախք չեն վճարում դիմելով Հեղինակին՝ Тифлисъ, Лабораторная улица, № 11. С. П. Мануэльянцу. Գինն է 2 ռուբլի։ (29) 20—6

Դուբա եկաւ պ. Մատիրոսեանի տպարանից
ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ
ԽՆԱՄԱՐԱՐ եւ ՆՈՐԵՐԻՑ ՄԷԿԸ

Պատկերներ
ՀՐԱՏ. ՍԻՒՆԵՑԻ
Գինն է 50 կոպէկ.

Ծախվում է Շահվերդեանի պավիլիոնում, կենդրոնական և կովկասեան գրավաճառանոցներում։

Օտարաքաղաքացիք թող դիմեն։—Баку. Реалисту Апушавану Калантарову передать Сюнеци կամ Тифлисъ, *Ширваншэ*.

Ծախվում է յօդուտ Բագուի հայ աղքատ աչակերտների.

(33) 3—3

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 23-го Февраля 1885 г. Типограф. М. Рот. и К-о. На Гол. проспектѣ Домъ № 41.

Տպարան Մ. Ռոտինեանց և ընկ.